

անարժ կայք ունեն քաղաքում եւ ուրեմն քաղաքի վիճակը կարգավորել է բացառապէս այդ ձայնաւորները: Քաղաքում յայտնի կարգեր սահմանելու համար՝ անհնար առաջ պէտք է այդ կարգերին ենթարկվեն նոյն ձայնաւորները, որպէս խոշոր կարգաւորների տէրեր: Պարզ բան է, որ նրանց ձայնաւորն չէ աւելցնել իրանց պարտաւորութիւնները, ուստի ամեն մի բարի սկզբունք ճշգրտում է նոյն ձայնաւորների ձեռքով: Ի նկատի առնելով այդ անյարմարութիւնը, վերջերս պետական շրջաններում առանձին ուղղորութիւն են դարձրել այդ հանգամանքի վրա: Ենթադրութիւն կայ փոփոխութիւն մտցնել քաղաքային ինքնավարութիւնների այժմեան կարգերում եւ ձայնի իրաւունք տալ կրթութեան ցեղով ունեցողներին: Այսպիսով ձայնի իրաւունքը կը ստանան եւ այն քաղաքացիները, որոնք թէեւ անարժ կայք չունեն քաղաքում, բայց մասնակցում են քաղաքի հարկերին՝ բնակարանի հարկ վճարելով:

Ողջունելով այդ մտադրութիւնը, մենք հաւատում ենք, որ նոր օրէնսդրութիւնը լոյսի նոր շող կը ծագիցնէ մեր քաղաքային ինքնավարութիւնների մարած կեանքում:

Սօֆիա Դանիէլեւիչեան

Գործօրում

ՆԱՄԱԿ ԱՆԱԿԱԿԱՔԻՑ

Նոյեմբերի 3-ին

Ձմեռը մեր սարահարթում արդէն սկսվել է: Նրա սովորական դաժանութիւնը այս տարի պիտի կրկնապատուի երկրաշարժից եւ միջատներից առաջացած երկու մեծ աղէտների պատճառով: Երկրաշարժից վնասվածների դրութիւնը այս օրերն հարկ թէ անցեալ ձմեռվանից աւելի լաւ լինի, որովհետեւ, ինչպէս յայտնի է, կործանված տները չեն շինվել, իսկ առաջվայ հիւանդանոցները, վրանները եւ առհասարակ հոգացողութիւնը չը կայ: Գիւղացիները մի կերպ յարմարացրել են իրանց կործանված եւ կիսակործան տները, ուր եւ պատասպարվել են ժամանակաւոր կերպով:

Ինչպէս յայտնի է, գլխաւոր մասնաժողովի վճռով աղէտից վնասված գիւղացիների կործանված տները պէտք է վերաշինվէին իրանց գիւղացիների, օգնութեամբ, իսկ որբերի եւ այրիների տները ամբողջովին պէտք է շինվէին մասնաժողովի հաշուով: Բայց որովհետեւ շինութիւնների հարցը ուղղակի, եւ գիւղացիները անցեալ ամառ ժամանակ չունեցան աշխատելու շինութիւնների վրա, այդ պատճառով գլխաւոր մասնաժողովը որոշել էր առայժմ միայն սկսել որբերի եւ այրիների տների շինութիւնը, իսկ միւս գիւղացիներին յետաձգել եկող տարվան եւ միայն փայտեղէնը ամբողջովին բակտրիանից բերել առ բարալէթ գիւղը: Որովհետեւ փայտեղէնը արդէն բերված է Բարալէթ, եւ որբերի պատճառով որբերի եւ այրիների տների շինութեան աշխատութիւնները արդէն դադարեցրել են, աւելորդ չեմ համարում մի քանի տեղեկութիւններ տալ սկսված շինութիւնների եւ փայտեղէնի մասին:

Իրտիւղ գիւղում մի որբի տան պատերը ամբողջովին շինված են, մնացել է կտուրը: Մերենիա գիւղում սկսված են չորս տուն, երկու որբերի տների պատերը հասցրած են մին-

չեւ պատուհանների վերեւի ծայրերը. երրորդի պատերը բարձրացրած են մինչեւ 1½ արշին: չորրորդ շինութիւնը, որ սկսվել է ճարտարապետ պ. Յ. Խիզանեան, հասցրած է նոյնպէս մինչեւ պատուհանների վերեւի ծայրերը. բացի այդ չորրորդ բնակարանից՝ նրան կից գցված է եւ տնտեսական շինութիւնների հիմքը: Բալխո գիւղում սկսված են երկու այրիների տները, — մէկը պատերը հասցրած են մինչեւ պատուհանների կէտը, իսկ միւսի պատերը բարձրացրած են մինչեւ 1½ արշին: Սամարում մի պահ պատերը հասցրած են մինչեւ պատուհանների վերեւի ծայրերը: Ուրեմն այդ չորս գիւղերում ընդամենը սկսված են ութ շինութիւններ: Բացի դրանցից՝ Բարալէթի գիւղական առանի (СЕМЬ-СВЯТА КАЩЕЛЯРИЯ) շինութիւնը հասցրած է մինչեւ պատուհանների վերեւի ծայրերը. առայժմ երկու սենեակի պատերը շինված են քարից, բայց կրի տեղ որո՞ք է դրված ցեղա Գիւղական հիւանդանոցի հիմքը նոյնպէս դրված է: Արաբով գիւղի ուսումնարանի նոր շէնքը արդէն շինված, վերջացրած է: մնացել են ձեկովածը եւ ներքին Բարալէթի սուղանի նորոգութիւնները կապով տրված են պ. Միսաք Մուրադեանին:

Ապագայ տարվայ շինութիւնների բոլոր փայտեղէնը բերված է եւ անկարգ կերպով, առանց ծածկոցի, թափված է Բարալէթ գիւղում: Փայտեղէնի յատկութիւնը, մանաւանդ կտորները ծածկելու համար պարտաւորված տախտակներին (ДРАБ)՝ անբաւարար է: Որովհետեւ փայտեղէնը, մանաւանդ աղոցած մասը, տախտակները, կարող են անբաւարար փչանալ, ուստի տեղական կոմիտեալը որոշել է ծածկոց շինել եւ փայտեղէնը կարգով դասաւորել նրա տակը:

Սալիւսեան

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 4-ին

Նոր-Նախիչեանի հայազգի աղքատաց եկեղեցական հոգաբարձութիւնը այժմ գուցէ առաջին ազգային հիմնարկութիւնների մէկն է, եթէ ոչ ամենից առաջինը: Միայն նրա անարժ կալուածները արժեն վեց հարիւր հարար բուրձի: Ընդհանուր հաշիւը առ 1 յունվարի 1900 թ. հասնում է 870,338 բուրձու. ճշմարիտ, որ դա մեծ, խոշոր գումար է եւ եկեղեցական հոգաբարձութեան առաջ բացված է գործունէութեան մի լայն ասպարէզ:

Մենք միւս անգամ կը խօսենք այդ գործունէութեան եղանակի մասին: Այժմ մեր խօսքը աղքատաց հոգաբարձութեան ընդհանուր ժողովների մասին է: Այդ ժողովները վերին աստիճանի անհաճոյ տպաւորութիւն են թողնում: Ոչ ոք ոչ ոքի չէ ուղուում լսել, հասկանալ ժողովներում մէկ տեսակ ԿԱՄԱՐԻԼՅԱ է խմբված, որ ամեն ինչ ունակ լին է անուծ, թէ օրինաւորը, թէ բարոյականը: Ի՞նչ է դրա պատճառը: Դրա պատճառը ընդհանուր ժողովի կազմակերպութեան մէջ է. 25 տարեկան ամեն մի նոր-նախիչեանցի իրաւաստ ծխական է, որը նրա եւ անգամ ընդհանուր ժողովի, որը կանոնաւոր կը համարվի, եթէ իրաւաստների տասներորդ մասը ներկայ է, այսինքն ոչ պակաս քան 150 մարդ: Երկու երեք ժամեր անցնում են նշանակված ժամից յետոյ, իսկ ծխա-

կանները չեն ժողովում: Հոգաբարձուները մեծ ճիգ են թափում, ուղարկում են ծառային բազար, այս ինչ-այն ինչ գինեւորներ. ծառան խնդրում է, աղաչում է, վերջապէս իր աւաստուները մտնում են դահլիճ: Իր աւաստուներ... Բայց ինչ իրաւաստուներ: Այո, մեծամասնութիւնը խակ է ամեն կողմից եւ բարքով, վարքով, մտքով եւ սրտով: Երբեմն այդ մեծամասնութիւնը լուռ ու մունջ էր. երկու երեք աղաներ խօսում էին եւ հրամայում: առաջարկում էին իրանք եւ իրանք էլ ընդունում էին. մեծամասնութիւնը ստորագրում էր: Աղաները ասիացի էին, մեծ մեծ էին խօսում, շատ բան խոստանում: Եւ մէկ բուրբի եկեղեցունը զոնկով, տասը բուրբի աղքատաց զանաւանկից էին գողանում: Այդ աղաների համար ոչ մի սրբութիւն չը կար, իսկ աղքատի քրտինքը, արտասուքը եւ արիւնը այն յորջ անձրեւն էր, որ պիտի տար նրանց առատ հունձ եւ բերք: Աղաների տները շինվում էին աղքատի լուսայով: Այդ լուսայով փոքր էր, որ կարողանար մեր աղքատներին հարտասցնել եւ բաւականին մեծ, որ հարուստների գրպանները հաստացնէր...

Անցան տարիներ: Բնւ կեանք քանի մի ինտելիգենտներ. նրանք անվախ պոկկցին ասիացի աղաների դիմախիւները, մերկայցրին աղաների կեղտոտութիւնները:

Բայց այդ ինտելիգենտները իրանց հաշիւները ունէին: Ասիացի աղաները տապալված էին, դիմախիւները պոկված, ճշմարտութիւնը յայտնի էր, բայց ինտելիգենտները դարձեալ շարունակում էին իրանց մաքառուքը եւ փոխանակ ոտքի կանգնեցնելու հոգաբարձութիւնը, այդ ինտելիգենտները, չորս տարի շարունակ, ամեն մի ընդհանուր ժողովի մէջ կրկնում էին մի եւ նոյնը—«հաշիւները չենք ընդունում», թէեւ այդ հաշիւները տան շինութեան հետ կապ էլ չունենային: Խոտովութիւնները շատացան, ժողովները համը կորցրին, խոհեմ ծխականները հեռացան ժողովներից եւ նրանց տեղը բռնեց ԿԱՄԱՐԻԼՅԱ-ն: Մեծամասնութիւնը այժմ էլ չէ խօսում, նա մնչում է երկու խօսք—«չենք ընդունում»: Ինտելիգենտը հարցնում է ամբողջը՝ «ընդունում է՞ք»: ամբողջը մնչում է—«չենք ընդունում»: Եւ երբ մի քանի խոհեմ ծխականներ անում են մի առաջարկութիւն, ինտելիգենտը դառնում է անբոխի—«առ ուն երթ անք»: Եւ ԿԱՄԱՐԻԼՅԱ-ն հետեւում է նրան: Այդ ԿԱՄԱՐԻԼՅԱ-ն տեղին կառապանները, օրական մշակներն են, որ եոջ գիտեն դիւր եւ ոչ գորութիւն գրոցի:

Ախիստ. ինտելիգենտը մի եւ նոյն ասիացի աղան դարձաւ եւ սուրբ, լինել գործից անձնական հաշիւները ջոկել չը կարողացաւ: Նա լաւ է տեսնում եւ հասկանում, որ խոտովութիւնները վնասում են հոգաբարձութեան աշխատին, վարկին, գործունէութեան եւ նոյն իսկ գոյութեան, բայց նրա անձնականը, նրա հեղինակութիւնը այդ խոտովութիւնների մէջ են: Աղաները գողանում էին փող, դա գողանում է անուն եւ հեղինակութիւն... Մեր աղքատները մտնում էին եւ քայքայում էին աղաների օրով: աղքատները այժմ էլ չեն առաջանում կամ չեն կշտացել...

Մենք լսում ենք, որ մեր առաջնորդը խոհեմութեամբ ցանկանում է վերջ դնել այդ խոտ-

ովութիւններին: Սրբազան առաջնորդը ամենայն սիրով ընդունում է հոգաբարձութեան առաջարկութիւնը կազմակերպել ծխականների ընդհանուր ժողով, որը կը դառնայ պատգամաւորների ժողով: Պատգամաւորների ժողովը վերջ կը դնէ բաղադրանքի հերոսների թաղաւորութեանը եւ պատգամաւորները կը լսեն եւ կը հասկանան իրար: Հոգաբարձութեան արդի դրութիւնը անտանելի է. ընդունենք այն, ինչ որ ընդունելի է, եւ դիմենք դատաստան, եթէ կարելի է. բայց չեկրկնենք այդ խոտովութիւնները, «պահ մը» մոտանալով մեր անձնականը եւ ետը եւ երբէք չը մոտանալով, որ վրութեամբ փոքր գործերը մեծանում են, իսկ անմիտութիւնը եւ մեծ գործերը փոքրանում են, ոչնչանում, անհետանում...

Գր. Չախուչեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ալէքսանդրօպոլ, նոյեմբերի 5-ին

Խնդրում եմ վերջին անգամ տեղ տալ ձեր յարգելի լրագրի մէջ իմ մի քանի տողերին՝ ի պատասխան Քամոյեան եկեղեցու Յովսէփ քահանայ տէր-Պետրոսեանի՝ ձեր թղթի 208 համարի մէջ գետեղած նամակին:

Առաջին իմ խորին համոզմունքն է, որ շի պայտօնէ պարտաւորութեան չէ գզացել Յովսէփ քահանայ իմ դէմ գրելիս, այլ շատերին յայտնի փաստերի դրոշմաբ, որ նա ինձ թշնամի է ճանաչում եւ մինչեւ անգամ եկեղեցու մէջ իմ դէմ բանադրանք է թող տուել: Անս այժմ էլ ծխականների ժողովից առաջ ուղեցել է մի հարուած էլ ինձ հասցնել: Երկրորդ երգեցիկ խոմբ կազմելուց առաջ եւ խորհրդակցել եմ միաբան քահանաների հետ եւ միասին հաշուել ենք, որ եկեղեցու շինութիւնը մի տարվայ մէջ այնքան կառուցանայ, որ կարելի կը լինի ժամասացութիւն սկսել, իսկ խոմբը պատրաստվում էր հինգ տարվան պայմանով, ուստի աւելորդ չենք գտել այդ կարեւոր ծախսը անել: Եթէ իմ կողմից յետին միտք կար, ինչու Յովսէփ քահանայն այն միջոցին չը յայտնեց, թէ դա դուր ծախս է: Վերջապէս այդ խմբի անդամներն այժմ էլ Թիֆլիսի մէջ են եւ իհարկէ երգում են հայոց եկեղեցիներում: Երրորդ՝ եթէ ես ասած լինեմ, եթէ Քամոյեան եկեղեցու գումարը կազմվել է եկեղեցու արգիւններից, դա փաստ կը լինէր, բայց թէ ես երբ եւ ինչ թող եմ տուել ինձ հայոց եկեղեցիների մէջ ծխականների աւանդական իրաւաստութիւնը չը ճանաչել եւ ցանկալ, որ մեր եկեղեցիների դարերով հաստատված հիմքը եւ ժողովրդի հետ ունեցած սերտ կապը խախտվեն, եւ այնքան միամիտ եմ եղել, որ այդպիսի աղքատ դաւ միտքը յայտնել եմ ինձ թշնամի ճանաչված Յովսէփ քահանային, դա անուսաղը հաւանական չէ. եւ անհասարակ նամակի մէջ բերած իմ եւ Յովսէփ քահանայի մէջ իրրեւ թէ, տեղի ունեցած այդ կերպ խոտովութիւնը տէր հօր երեւակալութեան արդիւնքն է: Զորրորդ փաստ է, որ իմ վերաբարձու ճիշտարարական եւ յանձնել եմ ներկայացնելու ծխականների ժողովին, մինչեւ ժողովի կայանալը: Հիշեցրողը՝ նոյնպէս փաստ է, որ ես անտեղեակ էի հայապատմութեան եւ երբ նորընտիր երէցիքի պ. Վարդապետեանը ցոյց տուցի իմ սխալումը, ես գնեցի եւ ուղարկեցի նրան պակասող չորս բնուստները, եւ եթէ ես ուղարկել եմ իմ որդու ձեռքով, առանց ձեւակալանութիւն պահպանելու, դա իմ գործն է եւ չը գիտեմ ինչու է մէջ բերված:

Ինչ վերաբերում է այն կառուցիին, թէ շինքն էլ (այսինքն ես) չուսով գործ գտաւ քաղաքից դուրս եւ տեղափոխվեց Ալէքսանդրօպոլ... պէտք է ասեմ, որ ես ընդի պէտքսանդրօպոլի

III

Ամարային պայծառ արեգակը երկրի վրա թափում է իր կենսարար լոյսի շերտ հեղեղը: Գիտնից գործըն է բարձրանում: Մտանքը արդէն թօթախիլ են իրանց ծաղկային զարդերը: օդի մէջ աննշմարելի կերպով սաւառնում է սէրը:

—Ներքեք, եթէ չեմ սխալվում, այս ձեր հովանոցն է:

—Շնորհակալ եմ ձեզինց:

Երկունս էլ խօսում էին առանց աչքները բարձրացնելու, բայց տիկնոջ մի թեթեւ կարմրեց: Երեխաները հեռուից միաս բարեւ են ասում, օգային համարյոներ ուղարկելով միմեանց, բղաւելով. «Ճանախութիւն»:

Մօջ Սիմէօնը նայում է ամենքի վրա՝ ժպտալով, մի արագու պէս, որը ամեն բան հասկանում է լուսով:

Աննանային մի առաւուս, ազդիկները եւ տղան միմեանց ձեռքից բռնած եկան: Ետեւից, մի քանի քայլ հեռու, միմեանց հետ կամաց-կամաց գալիս էին ծնողները:

Այժմ երկու չիբիմներն էլ ամբողջովին ծածկված են տերեւներից. եւ Մօջ Սիմէօնը այլ եւս չի աւուսում այդ տերեւները: Նրանց մտանք անցնելիս նա շարժում է գլուխը եւ փնթփնթում:

—Ահա տեսնում էք, ես գիտեի, որ ձեզ կը մոտանան...

Մ. Եսայանց

Մեռելների բնակարանը ամբողջովին ծածկվել է մատաղ թաւ կանաչով: Օդի մէջ ծաւալվում է մանուկ թարթուքեան բուրբուռները եւ մի անորոշ գրգռութիւն, որ սիրայ կոչ է անում: Գիւղից մասնատան դռները բաց են բոլորովին: Ժողովուրդը խմբվում է պարիսպների մէջ: Լավում են ողբ ու հեկեկանք: Նոր հիւր է եկել ճաշակելու յաւիտենական խաղաղութիւնը... Ահա թափօրը արդէն գերեզմանի մօտ է... Հեծեծանքը եւ հառաչանքը փոխվում են սիրտ քրքրող, յուսահատ բողբոջի... Քահանան կիսերգելով կարգում է վերջին արթթները... Կեանքներից արդու փայլելում են, ծուլը բուրբուռնից կապտոտ բարակ հոսանքով բարձրանում է օդի մէջ:

—Ո՛չ... ո՛չ, նրան մի լուքը ինձանից: Թող սուտեք մի անգամ եւս նայիլ նրան:

Ծաւալի է լսել այդ տանջալից ձայնը... Սգազգետ հագած երիտասարդը, վշտից իրան կորցրած, խելագարի պէս թաւալում է, դէն հրեւով բարեկամներին, որոնք բռնած պահում են նրան, դէպի դադաղն է նետվում, որը հէնց նոր են իջեցրել գերեզմանը: Նրան թող չեն տալիս... նա լալիս է... աղօթում է...

Requiescat in pace *) —յուզարկաւորութեան քայլերի ձայնը իրացնում է ողբն ու հեկեկանքը: Ամբողջ ցրվեց, մեռելների օթե-

*) Ննչեա խաղաղութեամբ:

ւանում նորից տիրում է խորին լուռութիւն: Արեգակը միայն արքայական առաստաձեւութեամբ ողողում է նրան լոյսի հեղեղով:

Մի գծաղբ էլ ամեն առաւուս գալիս է ողբաւոր չիբիմի վրա:

Մօջ Սիմէօնը աչքի տակովը նայում է նրան եւ փնթփնթում:

—Տես, տես, նրանք մինչեւ անգամ չեն էլ նկատում միմեանց: Չարմանալի է: Դա ինչ բան է: Հը՞... Կապրենք, կը տեսնենք:

Եւ իրաւ, երկու անմխիթարներն բաժանող տարածութիւնը այնքան աննշան է, որ հեշտ էր նրանց համար միմեանց տեսնել եւ լսել: Բայց միթէ նրանց հոգիները ընդունակ են ըմբռնելու արտաքին աշխարհի տպաւորութիւնները: Կորուստի պատճառով երկունս էլ ընկղմված են վշտի մէջ. ամբողջ աշխարհը կեթէ կործանվէր, գուցէ նրանք չը նկատէին էլ այնքան վշտահար էին:

Խնդազին մայիսը առատօրէն ժպտաներ է չնորձում մեզ, երկիրը պնձված է դարձանային զարդերով, ծառերը ծաղկեցնելով: Ա՛խ, սրբան լաւ բան է կեանքը:

Այս օւժ երեխաներն են: Ի՞նչ գեղեցիկ են: Ի՞նչ ուրախ են հնչում նրանց քրքրիչ զիւ ձայները մեռելների լռիկ օթեանում:

Մօջ Սիմէօնը անբաժան է այստեղից: Կարծես թէ նա էլ կանկուտ է մասնակցել ման-

կական այդ ուրախութիւններին, այդ անմեղ անհոգութեան, որը ոչ գիտէ, ոչ յիշում է եւ ոչ էլ նկատում իրերի մտայ դրութիւնը, որը շրջապատում է նրանց:

Երեքը միասին ինչպէս են աղմուկ բարձրացնում:

Խարտեաչ, արդէն բաւական մեծ օրիորդը տիկին Կորնեայի աղջիկն է: Իսկ հրէն այն փոքրիկ աղջիկը եւ նրա փոքրիկ եղբայրը—խեղճ հանգուցեալ տիկնոջ երեխաներն են...

Նրանց հայրը լալիս է... լալիս, ինչպէս կին Նայում եւ նրան, սիրտը պատուում է: Երեխաները բարեկամացան հէնց առաջին հանդիպումին: Այդ էր պակաս. երեխաների համար ինչ կայ որ:

—Հը՛, ինչ կասես, Մօջ Սիմէօն.—Ո՛չ, ո՛չ... գիտեմ ինչ եւ մտածում... բայց այդ անկարթի լի է: Անխեղութիւն է ենթադրել, որ այդ երկու արարածների մէջ, որոնք խորակված են մի եւ նոյն վշտից, կարող է... Գլուխը այդպէս մի շարժիր... Նայիր, նրանք մինչեւ անգամ միմեանց չեն էլ նկատում.—Ինչպէս ես դու կամենում, որ նրանք ծանօթանային: Աշխարհ, կաննք, յոյս—այդ ամենը այլ եւս գոյութիւն չունեն նրանց համար, այդ ամենը լալել է մահը... Դու ասում ես, որ նրանք այնուամենայնիւ կը ծանօթանան, եւ որ... Ո՛չ, ո՛չ, կրկու չիբիմներ բաժանում են նրանց...

ներառ Գոմֆրէ, որ հետախուզում էր Շանգ-հայտանի նաւահանգիստը այն կողմից, թէ որքան նա պետքական է ձմարը: Նա զեկու-անում է, թէ ի նկատի առնելով այն հանգա-մանքը, որ նաւահանգիստը հեշտութեամբ կա-րելի է պահել չը սառած դրութեան մէջ, մի-ջադրային միջոցներով պէտք է նաւահանգիստ շինել Միւլանդաոսում, 8 մղոն Շանգհայտա-նից հեռու, որ կը պահանջէ 200,000 դոլլարի ծախս: Պէյլոս դեար արարութեամբ սառչում է Տունչժաօից դէպի հիւսիս եւ, երեւի, նաւար-կութիւնը նրա վրա չուտով կը դադարի:

ԲՅՐԼԻՆ: Վարդերդէ հաղորդում է Պեկինից, թէ մի զորքաժին կազմված երկու բաժանու-րից, թիւառօթներից եւ հեծակներից, ճանա-պարհ է ձգված այսօր մայրօր Միւլանդիցի հրամանատարութեամբ Մեալզիդեանի վրայով: Առաջապահները կը հասնեն Մեծ-պարսիկս իօրիկ զորքաժինը նոյեմբերի 4-ին հասա-նդիւմին: Վերադարձի ժամանակ նա հաղորդակ-ցութիւն կը հաստատէ Միւլանդիցի զորա-բանին հետ:

ՊՈԼԻՍ: Այսօր Ձինովի վերադարձաւ Լի-վադիայից: ՇԱՆԳՀԱՅԱՅ Այսօր հատուցվեց ժամանակա-միջոց ունեցող կուպոնների վճարը:

ՄԱԴՐԻԴ: Վիլլավերդէ ընտրված է պատ-գամաւորների ժողովի նախագահ:

ՊԱՐԻՉ: Կառավարութիւնը արտակարգ դե-նացք կը նշանակէ Կրիզէրի ուղեւորութեան համար Դիօմոնի մինչև Պարիզ:

ՄԵՖԻՆԻՆԳ: Լիխտենշտեյնի բոլոր ընկերու-նքը, մոտ 500 հոգի, տեղափոխված են այսօր, կառավարական իշխանութիւնները ուղեւորու-թեան միջոցներ տուին նրանց:

ԲԵՐԼԻՆ: Այսօր ստացված տեղեկութիւնից երեւում է, որ Լեյպս կիրակի օրը հասել է Մարսել:

ԲԵՐԼԻՆ: Բէյլստագ: Բիւլով կրկին անգամ թոււմ է այն պատճառները, որոնք արգելիցին այն ժամանակ պատասխանատու իշխան Տօնչե-լօէին գումարել ընկառուած: Բիւլով կարգաց «Freisinnige Zeitung» լրագրի յոշուածը, որի մէջ ընկառուած գումարումը աննպատակ է հա-մարվում: Բողոքից չէ, որ ես պատկանում եմ այն անձերի թւին, որոնք շատ լուրջ եւ ծանրակշիռ պատճառներ էին դնում հրաւի-րելու ընկառուածը: (ձախ կողմից լսվում է. «շատ ճիշտ է»): Բիւլով միայն կարող է ասել, որ լիթ էրը եւ իցէ կրկնվի այս տեսակ դէպք եւ լիթ էր այժման պայտօնի մէջ, այն ժամանակ ընկառուածը կը հրաւիրվի: (Ընդհանուր ծիծաղ-հաւանութեան եռանդուն ցոյցեր): Բիլտեր են-թադրում է, թէ ռուսական առաջարկութիւնը Ձի-նաստանից զորքերը հեռացնելու վերաբերմամբ պէտք է բացատրել որ եւ տարածախնութեամբ մեզ հետ: Այդպէս մտածել—նշանակում է շատ ստոր դնահատել այն եռանդուն գործունէութիւնը եւ հողատարութիւնը, որոնցով վարվում է ուս-տաց քաղաքականութիւնը, որ թոյլ չէ տալիս, ինչպէս եւ գերմանականը, զեկալարվել արածա-գրութեամբ եւ տարածախնութիւններով: Գեր-մանիայի համար ես կարող եմ երաշխաւոր լի-նել, բայց կը կամենայի անել նոյնը եւ Ռու-սաստանի համար»: Բիւլով շարունակում է ա-ռարկութիւնը Բիլտերի նկատողութեան դէմ, թէ Պրիւսիայի տիրապետութիւնը չարաբաց-րեց նրա վրա դրած յոյսերը: Բիւլով մասնա-ցոյց է անում անգլիական դիմադրական կու-սակցութեան յարձակումների վրա, որոնք ուղղված էին միլիտարութեան դէմ Հոնգկոնգի տիրապետութեան ժամանակ: Ինչ վերաբերում է Բիլտերի ջննդատալական վերաբերմունքին դէպի կայսրի ճանքը, ճառախօսը յայտնում է, որ, համաձայն սահմանադրութեան, պետական կանցիլը պատասխանատու է կայսրի կողմից արված որոշումների եւ կարգադրութիւնների համար, բայց ճանքը չեն վերաբերում այն եր-կու կարգերից եւ ոչ մէկին, բայց եւ այնպէս նա լիակատար պատասխանատուութիւն է յանձն առնում կայսրի ճանի համար, որ արտասանված է այնպիսի բովանդակ, երբ ամենքը համոզված էին, թէ Պեկինում բանտարկված եւրոպացի-ները սպանված են: Բեյլտերին բնական է, որ կայսրը խօսում է այս դէպքում իբրեւ զինւոր եւ ոչ իբրեւ զիւրաւան: Բայց որպէս զի զիւր-յումատրիս այս ժամանակ վնաս չը կրէ, այդ մասին թոյլ տուէք, որ ես հողամ: Բիլտերի առջ քերած ճանի մէջ, որ արտասանել է կայսրը Վիլհելմագրէնի զինւորական ժողովա-րանում, կայսրը նկարագրեց մեր քաղաքակա-նութեան նպատակները եւ այն խօսքերը, թէ մենք չենք թոյլ տայ, որ մեզ մի կողմ մղեն մեծ եւ նշանաւոր հարցերում, չէ պարունակում իրանց մէջ ձգտումներ խառնվելու այնպիսի հարցերում, որոնք մեզ չեն վերաբերում:

Բիւլով շարունակում է. «Ամենից աւելի քիչ հիմնաւոր է այն գծադրութիւնը, որ ուղղված է զլիւսաւոր հրատանտարի դէմ: Մենք չը հա-մաձայնեցինք մեր զորքերը Ձինաստանից հե-ռացնելու առաջարկութեանը, որովհետեւ են-թադրում էինք, թէ այդ հանգամանքը չէ կա-րող նպատակը Ձինաստանի շուտափոյտ խա-ղաղացմանը: Այդ առաջարկութեան մասին տե-ղի ունեցած կարծիքների փոխանակութիւնը կատարվեց պարտադիր ձեւով եւ չը թողեց ոչ մի անհաճօ հեռք: Ինչ վերաբերում է զլիւսաւոր հրամանատարի դէմ եղած յարձակումներին, միանգամայն սխալ է այն ենթադրութիւնը, թէ մենք կապեցինք նրան պետութիւնների վրին»: Այնուհետեւ Բիւլով ջննում է Բէլէլի յարձակումները միսիօնէրների դէմ եւ յայտ-նում է, թէ այդ չի ստիպել իրան այսուհետեւ աննպատ վերաբերվել կաթոլիկ հոգեւոր առա-ջակութիւններին: Բիւլով վերջացնում է, ասե-լով. «Այդպիսի հարցերին մենք այսուհետեւ եւս չենք խառնվի, բայց եւ չենք թոյլ տայ, որ մեզ գրկեն ուրիշ պետութիւնների հետ նաւասար իրաւունքներ ունենալուց եւ համալրարհային հարցերում մեր կարծիքը յայտնելու իրաւուն-քից: (Բարձրաձայն հաւանութիւն): Գերմա-նիան մեծ պետութիւն է դարձել եւ կը մնայ այդպէս Աստուծու օգնութեամբ: Ես համոզված եմ, որ ազգը թոյլ չի տայ համոզել իրան, որ հրաժարվի իրենեմարք կղզադառված համաշ-խարհային քաղաքականութիւնից եւ իրան վա-նջի համաշխարհային պետութեան դիրքից, ոչ էլ թոյլ կը տայ պակասեցնել իր իրաւունքնե-րը»: (Բարձրաձայն հաւանութիւն: Յուզում):

Կարգորֆի եւ Բիլէրաի ճանքից յետոյ նիս-տը յետաձգված է մինչև հինգշաբթի:

ՊԵՏԵՐԲՈՒԼԻԳ: 7 նոյեմբերի: Բորսա: Թիֆ-լիսի հողային բանկի 5%, գրաւաթղթերը—93%, առաջարկվում են. նոյն բանկի 4¹/₂%, գրաւա-թղթերը—86%, զնվում են. Գուլայիսի հո-ղային բանկի 6%, գրաւաթղթերը—101¹/₂, ծախ-վում են, նոյն բանկի 5%, գրաւաթղթերը—96 զնվում են:

Լիւվիւրիւ, Նոյեմբերի 8-ին, առաւօտեան 11 ժամին: Թագաւոր կայսրը երէկվայ օրը անցկացրեց բաւարար. ինքնազգայութիւնը լա-էր: Երեկոյեան 9 ժամին տաքութիւնը 39,2 էր, զարկերակը 76, Գիշերը Նորին Մեծութիւնը քիչ քնեց, առանց առանձին պատճառների, ընդհանուր վիճակը բաւարար է: Առաւօտեան տաքութիւնը 38,1 էր, զարկերակը—70, Լէյք-վերաբայթ Գիշը, պատուաւոր լէյք-բժիշկ Պօթով-բժիշկ Տիլմոնով:

ԽՈՐԱԳՐԻ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՒՊՈԼՅԱՆ ԶՐԱՏԱՐԱԿԻՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՍԱԶԱ ՄԷԼԻՒՐ-ԱՂԱՄԱԼԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 1900 թւի նոյեմբերի 30-ին

Վոլկասեան նախաձիգ (СТРѢЛКО-ВЫЙ) բառալիծի մէջ

նշանակված է ԱՅՈՒՐԻՎ առանց կրկնաձուրդի, կապարով տալու բառալիծի օֆիցիէրներին եւ զինւորներին

միս եւ ուրիշ ուտելիքներ

մատակարարելու գործը 1901 թւին: Պայման-ները կարելի է տեսնել բառալիծի զինւորա-տան մէջ ամենայն օր, բացի տօն օրերից, ա-ռաւօտեան 9 ժամից: (հ. չ. ե.) 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ ԳԻՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ներքին եւ երեսպայց հիւանդութիւններ: Ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւ-տեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օ-րից) 5—7 ժ.: Վերաբերվելու պիտոյց, տ. № 24: (հ. չ. չ.) 4—20

ԲԺՇԿ Մ. ԱԻԵՏԻՍԵԱՆԾ

Սօյալական փողոց, տ. № 17. Մասնապետութիւն է կաշուի եւ վեներա-կան հիւանդութիւնների:

Ընդունում է ամենայն օր, ժամի 6—8 երե-կոյեան, բացի կիրակի օրերից: (չ. ո.) 2—10

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ նրա զինւորատան մէջ 1900 թւի նոյեմբերի 11-ին նշանակված է անուրջ կապարով տալու կողմու խողովակի շինութիւնը՝ սկսած Ալաակարովի տան դռ-նից մինչև Կուր գետը: Սօյալական կապարով-րով 0,42x0,28 կարվածքով, 65 պագ. սաժ. երկարութեամբ եւ 1550 բուրլի գումարի: Աճրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագրերը Վարչութեան շին-նարարական բաժանմունքում: Բաժնի քաղաքի օրերը ժամի 9-ից մինչև 3-ը:

Լոյս տեսնելու վաճառվում են ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ 1901 թ.

Մ Ո Ց Ի Ե Պ Ա Տ Ի (ՇԵՐԱԿ) ՕՐԱՅՈՅՅՆԵՐԸ

Մոյցի օրացոյցը զարգարված է Ներսէս Մ Կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Բաֆֆիի եւ Յ. Այվազովիկու պատկերներով, ունի բոլորու-մի նոր եւ հետաքրքիր յաւելում՝ ամենաօթ-տակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշ-կարան, հարուստ երազան ու նոր զուար-ճախի վիճակարան:

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական իր-բատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատ-մութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ ա-ռակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողո-վրդական առածներ, ժողովրդական երգեր, զիւղական լէճներ, ընտիր բանաստեղծութիւն-ներ, զուարճալի հանելուկներ, շուտասեղու-կներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ:

Տախտակը չեղ եւ ձաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում, 15 գոյնով: Ցանկա-ցողները մանրամասն բովանդակութիւնը տը-պագրված առանձին թերթով կարող են ստա-նալ ձրի:

Գները՝ ծոցի ինը—20 կօպ., պատինը—50 կօպ. գումարով գնողներին լինում է զիջում:

Դիմել՝ Александрополь, Карапету Алинянцъ, կամ Alexsandropole Karapet Apinian (Caucase):

Ցանկացողները թող շտապեն, որ իր ժամանա-կին կարողանանք պատուէրները ճշգրտեմք կատարել: (հ) 7—12

Հ Ա Ր Կ Ա Ի Ո Ր Է

Ռուսերէնի եւ եկեղեցական արարողութիւն-ներին լաւ գիտակ

Մ Է Կ ՈՒՆԱՅԻՐ 2

գիւղի համար. գերադասութիւն կը տրվի Ներ-սիսեան դարոցաւարներին: Հասցէն.—Сочи, Черномор. губерня, Мертвуч Айвазяну, для передачи Никогосу Петросянцъ. 3—4

Ս Պ Ա Ռ Վ Ա Մ Ե Ն

„Ս ՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

Ազգային լիակատար երգարանի առաջին հատորի չորրորդ տպագրութեան բոլոր օրի-նակները, Հինգերորդ տպագրութիւնը լոյս կը տեսնի աւելի շքեղ, բարեւի փո-խած եւ ճոխացրած: Սոյն հատորի վերաբերմամբ որ եւ է գործ ունեցողը դիմում է Բագու, «Սոխակի» հրատարակչի Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանից, սոյն հասցէով:

Протоіереху Григорию Григоріанцъ, Баку. 2—5

Տ Ի Գ Ր Ա Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Ե Ա Ն Ի ԱՌՁԵՆ

Ռ ՈՒՍՆԱՅԻՐ Ե Ն Բ Ա Ռ Ե Ր Ե Ն Ը

լոյս կը տեսնի ամբողջովին եւ ոչ մաս-մաս, ուստի առաջին մասի բաժանորդներից խնդրվում է յայտնել իրանց նոր հասցէները եւ այն ծախսերը, որ արել են բաժանորդագիրն ուղարկելու համար, որպէս զի յետ ստանան բաժանորդագիրը եւ ծախսերը: Դիմել—Тифлисъ, Графская № 7, присяжному повѣренному Тиграну Персесовичу Іоаннисянцъ. 2—5

„Շ Ղ Թ Ա Յ“

Ն Ա Ի Թ Ա Ր Դ Ի Ի Ն Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Ե Ա Ն Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ն Ե Ր Ը

յայտնում են ի զիտութիւն ընկերութեան պ.պ. անդամների, որ երկրորդ 10% մուտ-քը, այսինքն 10 բուրլի ամեն մի 100 բուրլի արժողութեան փայի, կընդունվի Ա. Փրիգոսեան եւ ընկ. ընկ. ընկ. գրասենեակում նոյեմբերի 6—10. ժամանակաւոր 5%-ոց փայերը ներկա-յացնել Յ. Մէլք-Բախտամեանի խանութը երկրորդ մուտքը նշանակելու համար եւ ստա-նալու ընկերութեան նստարանի պայմանագրի օրինակը: 2—4

Ե Ր Գ Ի Չ Ֆ Ի Չ Ա Ն Ի

իր ալեքսանդրօպոլցի ընկերների հետ այժմ գտնվում է Բաթումում եւ խնդրում է Բաթումի հայ հասարակութիւնից պատուել իրան եւ իր ընկերներին՝ ներկայ լինելով խմբի երգեցողու-թեանը: Խուճըր անում է սկիզբից, թափ եւ զէֆի վրա, Պետերբուրգական փողոց, Եւ-գոր Գալուստովիչի տանը: 2—3

Ընդունվում են աշակերտուհիներ իշխ. Մ. Թոււմանեանցի նոր բացված Թիֆլիսի առաջին գորգի արհեստանոցում

Արժանակի բազար, տ. քաղաք. կրեդիտ. ընկ. մուտքը բազից. Պայմանները իմանալ արհեստանոցի կառավարչուհի տ. Մ. Այվազեանցի մոտ ամեն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը, բացի կիրակի եւ տօն օրերը: 5—5

ԲԱՏԵԱՍ Ա ՎԱՊԵՐ ՖՐԱՆԿԱՅ Ն. ՊԱՊԵՏ ԵՏ Շ-ԻՅ ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱՊԵՏ ԵՆ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՅԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու-շաբթի մի անգամ:

Եւ հակառակը Բաթումից Մարսել, ամենկողմ Տրապիզոն, Սաւսօն եւ Պոլիս: Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 8/21 նոյեմբերի—չոյգնում ԱՆԱՏՈՒ, կապիտան ԲԻԱՆԿԻ: Եւ արագէս շարունակաբար, երկու-շաբթի մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից իւրտոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան առմասկներ տրվում են սովորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի Կ. Անտոյէրպէի մէջ, ընդու-նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար: Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-մար թող բարեհաճեն զիմել ընկերութեան գործակալաւորներին:

ԲԱԹՈՒՄԻՍՏՈՒՄ—պ. Օ. Գ. Բարե-կենդանեանին, Միօնի փող. Ոջախարովից եւ Մայսուրաձէի քաղաքաւար: ԲԱԳՈՒ—Եղը. Վ. եւ Ի. Մուլաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27: ՆՕՎՈՐՕՍՍՈՒԹՅԱԿ—Վլադիկաւկաղի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (հ. չ. չ.) 16—20

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթ-ուղեւորութեամբ: Մեծ արկղիկը 5 բուրլի, փոք-րը—3 բ. և 1 բ. 50 կ.:

ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մազիկը բուսեցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփու: Պարս Ե եկել նաև բոլորովին նոր միջոց

Ձ ՈՒ Ի Կ Ա Թ Ը

Երեւոյն քննութիւն եւ սպիտակութիւն տա-լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-ռած սևութիւնը, մուկները, տալիս է կա-շտիկն քննութիւն եւ սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ արուակը, արկղի-կի մէջ, 2 բուրլի, փոքրը—1 բ. 50 կ. Մարվում են յայտ պարֆումերական եւ զեղաւաճառական խանութներում: Գրիսա-ւոր պատճառը գտնվում է Պետերբուրգում, Պոլիկիսկայա փողոց տ. № 15, բնակա-րան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են Քլ.Ֆլիտում կովկասեան դե-ղատան ապրանքների վաճառման ընկերու-թեան խանութում՝ Երևանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միջալեւան փո-ղոց եւ Բագուում. նաև Միջալեւան կառու-րչի վրա, Պայովի եւ Արխանգոլի դեղատ-ներում: Օտարաբարձարացիները պատուէր-ները կատարվում են անմիջապէս՝ պատուէր: 8—100

Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Մ Ը

Կ Ե Ն Ա Վ Ա Ր Ի Ի

գաներ տալ գերմանական ընտիր մեթոդով. հարկ եղած վկայագրերն ունի: Դիմել Գա-ննօվկայա փողոց, № 11, Թովմաս Տէր-Առա-քիլեանի կազմարարական խանութը: 2—4

Մ Ո Ւ Ն Կ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ազգային լիակատար երգարանի առաջին հատորի չորրորդ տպագրութեան բոլոր օրի-նակները, Հինգերորդ տպագրութիւնը լոյս կը տեսնի աւելի շքեղ, բարեւի փո-խած եւ ճոխացրած: Սոյն հատորի վերաբերմամբ որ եւ է գործ ունեցողը դիմում է Բագու, «Սոխակի» հրատարակչի Գրիգոր աւագ քահանայ Գրիգորեանից, սոյն հասցէով:

Протоіереху Григорию Григоріанцъ, Баку. 2—5

Ս Պ Ա Ռ Վ Ա Մ Ե Ն

„Ս ՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“